ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<< 04 >> հունիս 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 1406

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Անի Աշոտի Մադոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ 29.03.2021թ. թիվ 695/2021/ԿՈՒՎ4/Ն տեղեկանքի (տեղեկանքը կցվում է)՝ ֆիզիկական անձ Անի Աշոտի Մադոյանի (ՀՎՀՀ՝ 49624038, ՀԾՀ՝ 6209830293, հասցե՝ Արմավիրի մարզ, Արմավիր, Հանրապետության 2 նրբ., 26 տ.) հարկային պարտավորությունը 29.03.2021թ. դրությամբ կազմել է 113.720 դրամ, որից հարկ՝ 100.000 դրամ, տույժ՝ 13.720 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 08.06.2021թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշման հիման վրա ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից 2019թ. օտարվել է Արմավիրի մարզ, Նորապատ, 5-րդ փ., 13/1 խանութ հասցեում գտնվող անշարժ գույքը: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի /մինչև 29.06.2019թ-ի գործող խմբագրությամբ/՝ վերոնշյալ գույքի օտարումը համարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում, իսկ գույքի օտարումից ստացվող եկամուտներն այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի: Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ վերոգրյալ գործարքից հաշվարկվում է եկամտային հարկ 10 % դրույքաչափով:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը, հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Ֆիզիկական անձ Անի Աշոտի Մադոյանի կողմից 2019թ. եկամտային հարկի տարեկան հաշվարկը չի ներկայացվել և չի վճարվել եկամտային հարկի գծով պարտավորությունը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը կազմում է 113.720 դրամ, որից հարկ՝ 100.000 դրամ, որը հաշվարկվել է Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով, տույժ՝ 13.720 դրամ, որը հաշվարկվել է Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով:

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասին 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ֆիզիկական անձ Անի Աշոտի Մադոյանից գանձել 113.720 դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

29.03.2021թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2020	100.000	13.720	-	113.720	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհետաձգության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝
Իրավաբանական վարչության հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման բաժին
Լուսինե Ջաղացպանյան
հեռ.՝ 011-549-191 (9168)